

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՓԱՅՏԱՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

(Հնախօսական Ակնարկ Մը)

Հնտիր փայտափորագրելու դուռ մըն ալ կայ Երուսաղէմի Ս. Յակօբեանց վանքին եկեղեցւոյն մէջ, սրտին վրայ բարձր, ուր կարելի է բարձրանալ փոխադրելի սանդուխով մը: Պատին վրայի այդ դուռը պատին մէջէն աստիճաններով կ'առաջնորդէ զէպի երկու մատուռներ եկեղեցւոյն վրան, Ս. Պետրոսի եւ Ս. Պօղոսի:

Այս զեղակերտ դուռը, որուն նկարը առաջին անգամ հոս կը հրատարակենք (նկար թիւ 25) այժմ իրարու կցուած իր երկու փեղկերուն վրայ ունի սա յիշատակարանը.

Ա. փեղկ:

ԿԱԶՄ ԴՈՒՌՆ Ա ՍԲ ՏԱՃԱՐԻ  
ՈՐ Է ՅԱՆՈՒՆ ՍԲ ՊԱՒՂՈՍԻ  
ԱՌԱՔԵՂՈՑ ՄԵՓՄՅ ԳՆ(ԴԻ)

Բ. փեղկ:

ՍՍ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ ՀԵ  
ՉԱՀՈԳՈՅՆ ՅՈՎԱՆԻՍԻ  
ԵՒ ԹՈՐՈՍ ՊԵԿԷ ԻԻՐ ԶԱՒԱԿԻ  
ԹՎ(ԻՆ)ՊԻ(1)

Թուականը ՊԻ հաւասար է Քրիստոսի 1371ին:

(1) Այս յիշատակարանը հրատարակած էր նաեւ ոգրացեայ ամենասիրելի բարեկամս Մեսրոպ Պատրիարք Նշանեան (Պատ. Երուսաղէմի, 1931, էջ 1225) սապէս. «Ս. Պետրոսի եւ Ս. Պօղոսի մատուռներու քանդակագործ փայտէ դրան իրարու կցուած երկու փեղկերուն վրայ: Ա. փեղկ. կազմ. դուռն սուրբ տաճարի Որ է յանուն սուրբ Պաւղոսի Առաքելոց մեծաց գեղի. Բ. փեղկ. Սա յիշատակ անջրնջելի Հեգահողի Յովանիսի Եւ որում...ԹՎ.ՊԻ» (1371):

Հետաքրքրական է որ կը տարբերի մինչեւ այժմ մեր ներկայացուցած հայկական փայտափորագրական դժառնքէ ցարդ ծածկ զուռերու վրայ: Չորս խաչեր, իրարու տակ շարուած կը տիրեն իւրաքանչիւր փեղկի: Պաչերու միջեւ եւ շուրջը բուսական ծագմամբ զարդաձեւեր, նրբահիւս եւ ճաշակաւոր, կը լեցնեն յատակը: Ամբողջ յղացումը, իր մանրամասնութիւններով, կարելի է գտնել հայ մանրանկարչութեան լուսանցազարդերուն եւ խորանազարդերուն մէջ: Գրան արտաքին նեղ գօտին ակնյայտնի նմանութիւն ունի 1272 թուականով գրակային (նկար թիւ 14 եւ 15) գօտիին հետ, նոյն ատեն յիշեցնելով Աղլէհի Մահմուտ Պալլանիի տապանին փայտափորագրելու գօտին՝ անտարակոյս հայկական փայտափորագրական արուեստ, ինչպէս որ բլրալու են Սէյճուզ կոչուած ուրիշ նմանաձեւ փայտափորագրութիւններն ալ: Ասոնց բոլորին հնադոյն բնատիպը կը գտնենք Մշոյ Առաքելոց վանքին 1134 Քրիստոսի թուականէն գօտիին մէջ (նկար 20):

Երուսաղէմի մեր վանքին այս դուռը ցոյց կու տայ հայկական փայտափորագրելու դուռերուն ունեցած դժաձեւի շարագրութեան խոշոր տարբերութիւն, թէ եւ նմանարուեստ ալ ոչ կրկնութիւն(2):

(2) Երուսաղէմի վանքին Ս. Հրեշտակապետացի Ս. Հովսիսիմէի մատրան փայտէ պահարանի դրան վրայ, հաւասարաբե իտալ մը փորագրուած է բուսական պտուտաձեւի վրայ, որուն զլիտն էրկու կողմերը փորագրուած է սա յիշատակարանը. «Ի հայկագրան մեծ բուսականին ՌՂԸ(1649) աւելին